

Եւ եղեւ յետ ժամանակի գալ յանապատն իշխանի մից յերկրպագութիւն սուրբուխտին եւ խնդրել աղաւմս ի ծերոյն: Եւ տեսեալ զառեւծն զի բերէր ջուր վանիցն, ի հիացման եղեալ հարցանէր ի նոցանէ թէ զինչ իցէ այն: Եւ ծանուցանեն նմա զորպիսութիւնն: Եւ նորա ողորմեալ առեւծուն, հանեալ երիս դաշիեկանս ետ ի գինս իշցյն<sup>1</sup>, զի աղատեցի առիւծն: Եւ իբրեւ աղատեցաւ առեւծն, դարձեալ սպասաւորէր իշցյն<sup>2</sup>:

Խսկ յաւուր միում դէպ եղեւ առեւծուն հանդերձ իշցին բերել ջուր յանապատն. Եւ հանդիպեալ այնօցիկ որոց տարեալ էր զէն, դարձեալ հաց բերելով ի սուրբ քաղաքն երուսաղէմ. Եւ էջն ընդ նոսա: Եւ առեւծուն տեսեալ ծանեաւ զէն, գնաց ընդ առաջ նորա: Յայնժամ տեսեալ ուղտապանացն զառեւծն, զարհուրեալ փախտական եղեն ի նմանէ: Եւ առեալ բերանաւն զպախցաց<sup>3</sup> իշցյն<sup>3</sup> եւ բերեալ ի վանսն, հանդերձ երիւք ուղտովլքն<sup>4</sup>, նյոն բարձեալ ցորենովին, յոյժ ուրախութեամբ կացուցեալ առաջի ծերոյն: Իրբեւ ետես ծերն յոյժ զղացաւ, թէ ի զուր դատապարտեցաք զառեւծն. Եւ եղեալ անուն առեւծուն Յորդանէ<sup>5</sup>:

Եւ յայնմ հետէ յոր վայր առաքէին զուղտսն ի պէտս վանիցն, զհետ նոցա երթայր առեւծն, Եւ սպասաւորէր հանդերձ երկիւղեւ: Եւ եղեւ գնալ առեւծուն զհետ ուղտուցն հեռաւոր ճանապարհ. Եհաս վախճան սուրբ ծերոյն երասիմոսի, Եւ ոչ հանդիպեալ առեւծուն յանապատն: Եւ յետ սակաւ առուրց եկեալ իւրնդրէր զծերն. Եւ ընթացեալ աշակերտ ծերոյն ընդ առաջ նորա եւ ասէ. Յորդանէ<sup>6</sup>, եթող զմեղ որբ հայրն մեր եւ փոխեցաւ առ Տէր: Եւ բերեալ կերակուր ետ առաջի նորա զի կերիցէ եւ նա ոչ եկեր. այլ յարուցեալ շրջէր եւ ինդրէր զծերն. Եւ իբրեւ ոչ գտանէր, զաղաղակ բարձեալ գոչէր ձայնիւ մեծաւ եւ ողբայր դառնապէս. մինչեւ զամենեսեան յարտասուս շարժէր: Յայն հայեցեալ աշակերտի ծերոյն կոչեաց զառեւծն եւ ասէ. Խկ զի երթեալ ցուցից քեզ զգերեզման ծերոյն: Եւ յուղի անկեալ երթայր զկնի աշակերտին: Եւ վասն զի հեռագոյն էր գերեզման ծերոյն ի վանիցն իբրեւ կէս մղնաւ, Եւ յորժամ եկին ի գերեզմանն, ասէ

ցառեւծն: Ահա գերեզման ծերոյն: Եւ նորա եդեալ զծունգսն իւր ի գետինն խոնարհեցուցեալ զգլուխն իւր ի վերայ գերեզմանին լայր դառնապէս. Եւ անկեալ ի գետինն թաւալէր եւ գոչէր արտասուելով եւ կոծէր չարաչար: Եւ այնքան հարեալ զգլուխն զգետնի, Եւ մագլաւն զկուրծսն մինչ առ ժամայն անկեալ մեռանէր: Եւ տեսողացն հիացեալ աւրհնութիւն եւ փառս մատուցանէին ամենասուրբ Երրորդութեանն որ այնպէս զփառաւորիչս իւր փառաւորէ:

Մրդ կացեալ առեւծուն ի սպասաւորութեան սրբայն երիս ամս<sup>1</sup> յառաջ քան զգտանել իշցյն Եւ հինգ ամս<sup>2</sup> յետոյ, Եւ մի ամս անձամբն բերեալ զգուր վանիցն:

Այս ամենայն եղեւ ոչ զի հոգի ունելով առեւծուն կամ բան, այլ աստուածային զաւրութիւնն այնպիսի պանչելիս երեւեցուցանէ. Եւ յայտ առնէ թէ զիարդ նախաստեղծին Ադամայ հնազանդ էին գազանք վայրենիք յառաջ քան զպատուիրանազանցութիւնն, զմերկանալն յաստուածային փառացն Եւ աւտարանալն ի բրախտին պահպանութենէ: Եւ դարձեալ ցուցանէ թէ որ կայ Եւ մայ ի հրամանին Աստուծոյ, մեծի փառաց Եւ պատույ արժանի լինի ի հանդերձեալ ատենին:



## ՊԱՐՍԿԱՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԱՅՈՒՂՆԵՐ

Ա.

ԱՃՈՒԳ ՄԻՍԿԻՆ ՄԱԹԵԱՅ

Ա.

Միջավայրն Եւ աշուղը:

Խինդ ու ծիծաղը երեսին, հանաք ու կատակը բերնին, պարզ Եւ հասարակ, բայց վառվուն Եւ կրակոս մի աշուղ է Միսկին Մաթեսուը (Աբրահամեան), որ երեսուն տարիներից ի վեր ծառայում է աշուղական արուեստին:

Նրա կեանիքի Եւ գործունէութեան շրջանը Սպահան նահանգի Զահարմահալ գաւառն է:

<sup>1</sup> Զեռ. իշուն:

<sup>2</sup> Թ. 213 բերանովի զպահուցա իշուն:

<sup>3</sup> Զեռ. իշուն:

<sup>4</sup> Զեռ. երեք ու զորովի:

<sup>5</sup> Թ. 213 Յորդանէս:

<sup>6</sup> Թ. 213 Յորդանէս:

Դա Պարսկաստանի այն մուայլ շրջաններից մէկն է, ուր գեռ կալուածատէր առբար-խան աւատական դասակարգերն են գերիշխում իրենց սահնձարձակ բռնութիւններով եւ կամայականութիւններով։ Դա այն գաւառաշրջանն է, որտեղ մինչեւ օրս էլ միջնադարեան անասելի խաւարն է իշխում եւ ուր աւանդական նախապաշտումներն ու դարերի սնոտիապաշտութիւնները գեր են կատարում գիւղացիների կեանքում։ Այնտեղ ամէն ինչ մուայլ է, ծանր, յուղիչ եւ ինեղիչ, ինչպէս ինքը կալուածատէր դասակարգը, որի երկաթէ գերիշխանութեան ներքոյ տնտքում է պարսիկ, հայ աշխատող, ստեղծագործող ու կառուցանող գիւղացիութիւնը եւ օրէցօր դիմում դէպի տնտեսական քայլքայում...։

Պարսիկ աշխատաւորութիւնը, որ իրանի բնիկ տարրն է կազմում, հաստատուել է այդ գաւառաշրջանում ամենահագյն ժամանակաշրջաններից։ Հայ գիւղացիութիւնը սակայն կաղմում է 17րդ դարում, Ըահ-Մբրասի օրով, Արարատեան գաշտի Բասեն գաւառից գաղթած ժողովրդի մի բեկորը. Նա ուղիղ երեք դարերից ի վեր կենդրացել է պարսկական հողի վրայ եւ իր համար կերտել մի նոր կեանք եւ նոր պատմութիւն։

Ահա այդ գաղթական ժողովրդի ծոցից է կեանք առել Միսկին Մաթէոսը եւ նրան էլ նուիրել իր կեանքը։

Նա գերազանցօրէն գիւղական ժողովրդի աշուղն է, նրա հարազատ երգիչը։ Ծըջում է նա միշտ գիւղից գիւղ, ապրում գեղջուկ ժողովրդի մէջ, նրա սրտին մօտիկ եւ ապրեցնում նրան իր աշուղական նուազներով, իր հոգու յաղերով, իր սրտի բարախումներով։

Երգում է նա գլխաւրապէս հէքեաթները ու սիրերգներ։ Երգում է աշուղ Ամիր օղլուց, Տէր-կարապետից, Յարթուն օղլուց, Խան-Չարանից, Խան-Ասկէրից։

Այդ երգերն ու հէքիաթները հնչեցնում է նա գիւղական հարսանիքներում, ինչոյք ներում եւ իր չնագուրի թրթառն, ներդաշնակ լարերով եւ իր գիւրեկան ձայնով առանձին փայլ է տալիս գեղջուկների տօնախմբութիւններին։

Այդ երգերով ու հէքիաթներով նա ներգործում է գիւղական ժողովրդի հոգեկան աշխարհի, նրա սրտի եւ մոքի վրայ, իսկ իր չնագուրով վառ պահում նրա մէջ աշուղութեան սէրը։

Ահա աշուղ Մաթէոսի կատարած գերը։

Բ.

Աշուղ Միսկին Մաթէոսի կեանքը։

Պարզ եւ անպաճայց է Միսկին Մաթէոսի կեանքի պատմութիւնը։ Կա Պարսկաստանի Զահարմահալ գաւառուի կիվասեան զիւղում է օրուել, ուր եւ ծնուել է 1880 թուականին գեղջկական պարզ իրացիթն է լինում նրա մասկը, ուր բոլորում է նա իր մանկութեան եւ պատանեկութեան շրջանը։ Գիւղական այդ խաւար միջավայրում նա դպրոցի երես չի տեսնում եւ մնում է անգրագէտ։ Կա գաստիարակուում է բնութեան ծոցում, աշխատանքի գաշտում։ Արօն ու մաճը, եղներն ու հունձքը լինում են նրա դպրոցը։ Այդ դպրոցում ապրում է նա ամբողջ տասը գարուններ։ Քան տարեկան հասակում զրկուում է իր ծնողներից։ Այնուհետեւ վշտոտ սրտով թողնում է հայունի գիւղը, իլ եղներն ու արօրը եւ պանդխտում։ Զուում է Պարսկաստանի Փէրիա գաւառի Սանգիրալան գիւղը եւ նուիրուում աշուղութեան արուեստին։ Աշակերտում է ուստա Պետրոս Պօղոսեանին եւ նրանից էլ ստանում աշուղութեան կոչումը։ Ապա իր վարպետի հետ, ուղիղ եօթը տարի շրջում է Պարսկաստանի քաղաքներն ու գիւղերը, թափառում է Համադան, Սպահանի Քեաղաղ, Քեամարա, Գեափլա, Փէրիա, Զահարմահալ գաւառները, մտնում է վրանաբնակ թօրքերի (Ղաշղարի) մէջ եւ հնչեցնում իր չնագուրին ու սիրերգ-հէքիաթները։ 1853 թուին բաժանուում է իր վարպետից եւ առանձին աշուղութիւն անում, Մինչեւ օրս էլ նա շարունակում է աշուղութեան արուեստը։

Նա այսօր Պարսկաստանի հայ աշուղների վերջին մնացորդներից մէկն է, որ անսայթաքառակ առաջ է քայլում աշուղական տատասկոտ Ճանապարհով...։

Գ.

Դէպի Զահարմանալ։

(Զահարմանալի ներքին-քօնարք զիւղում։)

1920 թ. Յունիս ամիսն էր։ Ուսուցիչ էլ Կոր-Զուղայի Ազգ. երկսեռ գպրոցներում։ Ուսումնական տարեշրջանը նոր էր վերջացել։ Աշուղական անտափ երգեր հաւաքելու եւ գիւղական ժողովրդի կեանքն ուսումնասիրելու կրակը ձգում է ինձ Սպահանի Զահարմահալ գաւառը, գեղջւեկ ժողովրդի մէջ։ Ժողովրդական

բանահիւսութեան բազմաթիւ անտիպ գանձեր  
էին թագնուած այդ ժողովոդի սրտում։ պէտք  
էր նրանց փրկել ժամանակի կլանող ժանիք-  
ներից։ Այդ կրակով համակուած, տուրիստի  
պայուսակը կողքիս, էն կրակ ու բոց օրերին,  
ճանապարհ եմ ընկնում։

Նոր-Զուղայից դեպի Զահարմահալ 20  
ֆարսախ է։ Եօթը ճանապարհորդներ ենք.  
Հայրենի գիւղը վերադառնող ուսանողներ եւ  
ես։ Մեր գնացքը իշուկների կարաւանն է։ Մերկ  
ապառաժոս սարեր, ընդարձակ ամայի դաշտեր.  
Խոր անդադասոր ձորեր, հսկայ լեռնաշղթա-  
ներ փռուած են մեր առաջ։ Գիշեր, ցերեկ  
կտրում ենք եւ անցնում, աւազակների ահ ու  
զարդարում մեր սրտերում։ Եւ արդպէս երեք օր  
ու գիշեր . . .

Երրորդ օրը, արեւածէգին, հասանք Զա-  
հարմահալ։

Հայաբնակ Կերգին-Քօնարք գիւղումն եմ։  
Ընդարձակ տարածութեան վրայ փռուած, բար-  
զիների ու բդիների տնկարաններով զարդար-  
ուած անպաճոյժ մի գիւղ է դա։ Զարդարուած  
է արեւելեան ոճով. չորս կողմից շրջապատուած  
է քառակուսի հաստ եւ երկար ցեխաշէն  
պարսպով, որ կրում է իր վրայ արեւելեան մի  
մեծ գարբաս։

Հայ գեղջուկների այստեղ հաստատուելը  
29 տարուայ պատմութիւն է, եկել են նրանք  
1891 թուին Մամուռան, Լիվասեան, Մամուռա-  
ն այլ Հայաբնակ գիւղերից, չորս կամ իսաների  
հարստահարութիւններին։ Այժմ բաղկացած  
են 55 ընտանիքից 241 շնչով։

Իշեւաննել եմ գիւղի ինտելիգէնտ երի-  
տասարդներից մէկի՝ «օդախում», որ ծառայում  
է իրեւ հիւրասենեակ։ Դա փաքրիկ, պարզ եւ  
անպաճոյժ մի սենեակ է, որի հողաշէն յատակը  
կահարուած է պարսկական կապերաններով եւ  
թաղիքներով։ Նրանց վրայ, պատերի կից, դրուած  
են ներքնարկներն ու բարձերը։ Պատերի ցածի  
մասում, «թախչաններ»ի վրայ, դրուած են տան  
իրեղները, իսկ վերեւի մասում, «թառեր»ի  
վրայ, դարսուած են չնեղէն եւ ապակեղէն աման-  
ները։ Երկար պատերից մէկի մէջ բացուած է  
մի այլ մեծ եւ խոր «թախչա», ուր դրուած են  
հիւրերի անկողինները, իսկ դրան ճիշդ գիմացի  
կարճ պատի վրայ շինուած է բուխարին (օջախը),  
որ ձմեռ ժամանակ ծառայում է վառարանի տեղ։  
Օդախն ունի մի փոքրիկ լուսամուտ, որտեղից  
լցու ներս է թափանցում։

## Պ.

Աշուղի «Դամը»։

Երեկոյ է։ Զիթէ մի աղօտ ճրագ պլազում  
է օդախի մէջ։ Ծալապատիկ նստել ենք ներք-  
նարկների վրայ եւ յենուել բարձերին։ Օդա-  
խում համախմբուել են գիւղի ջիւան-երիտա-  
սարդները, քեադխուղան, քեալանթարը։ Տաք-  
տաք զրուցում ենք գիւղի ցաւերից, առ բարսերի  
հարստահարութիւնից, դրսի աշխարհից, ինկիլ-  
ից, ֆրանսուղից, ալմանից . . .

— Բարով ես էկել վարժապետ ջան,  
օդախից ներս մտնելով՝ ուժգին սեղմեց ձեռքս,  
քառասուն տարեկանի մօտ, բարձրահասակ, նի-  
շար, սեւագոյն մազերով, բոցավառ աչքերով  
պարզուկ մի գեղջուկ։ Հազել էր նա լայն եւ  
երկար ողբնշոր (թումբան), վերեւից արխալուխ,  
նրա վրայից կապա. մէջին, կապայի վրայից, փա-  
թաթել էր 3—6 գաղ երկարութեամբ կտաւէ  
մի գօտի, իսկ գլխին դրել էր բրդէ մի գդակ։  
Նա պատից կախեց չմնդուրը եւ ծալա-  
պատիկ նստեց դրան մօտ։

— Բարի գալուստգ աշուղ, ձայնեցին գեղ-  
ջուկները։

— Բարին ձեր արեւին ախպրտիք, էկել  
եմ վարժապետ ջանիս հմար չօնդուր ածեմ,  
«դամ» տամ, տաղ ասեմ, ձայնեց աշուղը։

— Շնորհակալ եմ աշուղ ջան, հազար  
շնորհակալ, պատասխանեցի աշուղին։ Առաջին  
անգամ աշուղի «դամ» տալը, պիտի տեսնէի, դրա  
համար էլ սիրաս լցուեց անհուն ուրախութեամբ։  
Գեղջկական պարզ լնթրիբը՝ «իրեկվա-  
հացը», պատրաստ էր։ Գետնի վրայ փոեցին  
«մէզարը» (սփոռց), վրան շարեցին լոշ հա-  
ցերը, ապա բերին պղնձէ մեծ ամանների մէջ  
ածած եախնին ու փլաւը։

Օրհնանք-բարեմաղթութիւններով վեր-  
ջացաւ լնթրիբը։

Օդախը հետզետէ լցուեց գիւղի ջահել-  
ջիւաններով, իսկ դրան առաջ համախմբուել  
էին գեղջուկ «ջահել հարսներն ու աղջիկները  
նրանք եկել էին աշուղի զրոյցը լսելու եւ «Հայաս-  
տանցի հային» տեսնելու։ Հնադարեան աւան-  
դութիւնների անմեղ զոհերն էին նրանք, գիւ-  
ղական «ադամթի» համաձայն իրաւունք չունեին  
տղամարդկանց մօտ նստելու . . .

Ընթրիբից յետոյ բացուեց օդախի մէջտեղը։  
Աշուղն սպասել չտուեց, կանգնեց իր չինար  
հասակով, գլխարաց, սեղմեց չմնդուրը կրծքին  
եւ զարկեց լարերին։

Գեղջկական պարզ օդախը իսկոյն վերածուեց երաժշտական աշխարհի: Գեղջկական անոյշ, զգայուն երգն էր ծորում աշուղի շրթերից, աշուղական երաժշտութիւնն էր հնչում նրա չոնքուրից, արեւելեան բոցավառ, կրակոտ, ներդաշնակ, զգայուն խաղերով: Գեղջուկները յափշտակուած չօնքուրի լարերից, ձայնում էին. “Հայ ջան”, “սաղիդ մատաղ”, “ասա աշուղ ջան”:

Եւ աշուղը ոգեւորուած՝ զարկում էր լարերին եւ երգում: Կա վեհ կեցուածքով, ծանր եւ հանդարտ քայլերով, շրջում էր օդախի հրապարակում եւ նուագում էր ու երգում: Երգում էր նա արուեստի սիրով կրակուած, արեւելեան ուժեղ, վառ, թրթուուն ձայնի ելեւէջներով: Կա մերթ գէմի արտայայտութիւններով (միմիկայով), մերթ շեշտով ու ժէստերով, մերթ մարմի արագ եւ կտրուկ շարժուածներով, մեր աչքերի առաջ վերարտաղում էր գէպքը, հերօսների հոգեկան աշխարհը, նրանց պայքարը, յաղթանակը: Ասես նա արտիստիկ մի գերասան էր, որ իր ապրումներով ստեղծագործում էր իր հերոսի պատկերը եւ համակռում մեղ նրա զգացումներով եւ յոյզերով:

Այդ բոլորն առանձին թափէին ներշնչում նրա երգերին եւ լնդհանուր ոգեւորութիւն, կենդանի տրամադրութիւն առաջ բերում:

#### Ե.

#### Աշուղի հէքեաթը:

Սիրերգներն անվերջ ծորում էին աշուղի շրթերից եւ նա աւելի ոգեւորուած հնչեցնում էր չօնքուրի լարերը: Կա յոգնել չէր իմանում: Վերջն անգամ նա լարեց չօնքուրը եւ այս անգամ՝ պատմեց ժողովրդական պարզ, գողարիկ մի հէքեաթ: Բայց դա հէքեաթ չէր, այլ մի սրտառուչ դրամա, որ սկսում է երազկոտ, ժպտուն, վառ, բարախուն եւ վերջանում վշտու, տանջալից, թախճոտ, բայց յօւղիչ:

Գիւղական աշխարհը, գիւղական հրաբորուք սէրը, գիւղական վիշտը, ու ցաւը պատկերանում է այդ սիրերգ-դրամայի մէջ, արեւելեան նկարագեղ, բոցավառ գոյներով:

Ի՞յ աղալար, լսեցէք չորսան Հասօից, Սարերի իդիթից, դաշտերի արծուից. Նրա բիւլբիւլ եարից, վարդ գեօղալից, Անման ծաղիկ սիրուն, ջան Գաթմանից:

Այսպէս սկսեց աշուղը հէքեաթի նախերգանքը: Եւ այնուհետեւ պարսկերէն եւ հայերէն խառն լեզուով սկսեց պատմել եւ երգել:

Ահա այդ անտաշ հէքեաթի զրակամշակումն է, որ նոր կերպարանքով տալիս եւ այստեղ:

Գիւղի չորսանն էր Հասօն, բարձրահասակթիւդէմ եւ բարեսիրտ: Կա մանկութիւնի որբացել եւ մեծացել էր կանաչ սարերի լանջերին, նախշուն գառների եւ ոչխարների հետ Ապրում էր նա մի անշուր խրճիթում, ԱՀ Փարաջայի կապոյտ ջրի ափերին: Ղաւաղն էր նրա միակ լնկերը, որ ածում էր նա այնքան զրաւիչ, այնքան սիրայոյլ: Ամէն երեկոյ, երբ իր հօտի հետ սարից գիւղն էր իջնում Հասօնստում էր խրճիթի. երդիքում աստղերի շողերի տակ եւ մեղմ նուագում: Կա իր նուագ՝ երգով յուղում եւ վառում էր գիւղի աղջիկների սիրտը . . . :

Մի օր Հասօն, ԱՀ-Փարաջայ սարի ծաղկոս ձորում, կանաչ աղբարակին, տեսաւ Գաթմանին գիւղի արեւ աղջկան, տեսաւ եւ կախարդուեց:

Սիրուն էր Գաթման: Լուսափիթիթ, կարմրաթոյշ, մաղերը՝ ոսկի, ունկերը՝ կամար, աշքերը՝ ծով, շրմերը՝ ալ վարդ, բոյլ՝ սօս, միլուս-արեւ հրաշք աղջիկ:

Մի գեղեցիկ օր, Հասօն, ԱՀ-Փարաջայի ձորակում, առւելի ափին, լւսնի շողերի տակ սէր առեց սիրուն Գաթմանից եւ սէր տուեց: Բայց Գաթմանի սիրով վառուած էր գիւղատիրոջ՝ Ասիդ Բէկի սիրտը:

Բէկը ամէն առաւօտ, լուսածէգին, նստած ձին, Լուսաղբիւրն էր գալիս չքնաղ Գաթմանի սիրոյ գինով արբած . . . Այնտեղ՝ Շաղկեձօրի կանաչ լանջին, հաղարագոյն ծաղիկների մէջ սպասում էր սիրուն Գաթմանին:

Արեւի պէս սիրուն Գաթման, լուսաբացին, սափորն ուսին, աղըիւրն էր իջնում, սափորը լցնում, վարդ ժպիտով ծաղիկ փնջում, ալ վարգերով, շաղերով գիւղ գառնում:

Բայց մի օր սեւ ամպ պատեց ԱՀ Փարաջայի ժէռ կատարին:

Ահա բէկ, էն Անձ գիւղի խանը, իր ձիաւոր խմբով ԱՀ-Փարաջայի մարմանդ գէշերը շրջելիս՝ տեսաւ սիրուն Գաթմանին աղըիւր ակին շաղ ծամերը թրջիլիս՝ տեսաւ եւ զարկուեց նրա արեւ-լուս պատկերից: Հոգին վառուեց, սիրտ առեց եւ փախցրեց սիրուն աղջկան:

Դմացաւ Ասիդ բէկը եւ կրակ բռնեց: Նա  
կոիւ բացեց Ահադ բէկի դէմ:

ԱԼ-Փարաջայի կանանչաղարդ դաշտի վրայ  
բաղմել են դէմ-դիմաց սէգ, վիթխարի սէգ լեռ-  
նաշղթաներ: Կրանց արեւելեան փէշին ընկած  
է Սարդարադի կանաչ ծաղկաղարդ դաշտը,  
որի փէշերից օձապտոյտ ոլորտներով ժպտուն,  
անհոգ սահում են Սիանի զուլալ գետակ-  
ները:

Կանանչ դաշտի հակամարտ գծերի վրայ  
ծփում են մի խումբ վրաններ. դրանք Ասիդ եւ  
Ահադ բէկերի զինուորական վրաններն են, որոնց  
ներքոյ, խոտերի վրայ, բաղմել են գեղջուկ զի-  
նուորները, հրացանները գրկած:

Խնչու են զինուել, ում համար, ոչինչ չգի-  
տեն գեղջուկները: Առբարները նրանց բռնի  
կուռի դաշտ են մերել:

Կէսօր է, արեւավառ: Հազար-հազար գեղ-  
ջուկներ, հրացանները գրկած, շարան-շարան  
ԱԼ-Փարաջայի սէգ ժայռերից մագլցում են  
դէպի վեր...: Մի ժամ: Եւ ահա կոիւն սկսում  
է անողք, գոռ: Սուրում են կարմիր գնդակ-  
ները եւ կանաչ սարերի խրամատներից արիւ-  
նաթաթախ ցած են գլորուում գեղջուկ-զի-  
նուորները, կարմիր արիւնը ներկում է Սիանի  
ջրերը եւ ԱԼ-Փարաջայի կանաչ արտերն ու  
դաշտերը:

Վերջալյու է, հրակարմիր: Այստեղ,  
Ահադ բէկի ճերմակ վրանում, մետաքսէ գորգի  
վրայ նստել է ֆաթման տիսուր եւ թակնուու-  
նրա խոցուած սիրտը արիւն է լալիս: Տանջուում  
է նա Հասօյի սիրոյ կրակով: Մի քանի սուխնա-  
զարդ զինուորներ շղթայ են զարկել նրա վրանի  
շուրջը:

Բայց սէրը փշուում է նոյն խոկ ժայռերը:

Վերջալյու է. արեգակի կարմիր շողերի  
հետ, Ասիդ բէկի բանակից գաղանի ԱԼ-Փարա-  
ջայի կանաչ դաշտն է իջնում լուռ մի ստուեր,  
Նա սիրոյ կարօտով կանգ առեց ծաղկութ ձորակի  
աղբարակին, հանեց սիրնը մէջքից, զրեց սիրտը  
սրնդի մէջ եւ նուագը ծփաց:

Գոյ Հասօն էր:

Ալնդի անուշ, ներդաշնակ խաղերից  
ժպտացին հազարագոյն ծաղկները: Ժպտաց եւ  
ֆաթմանի սիրավառ սիրտը: Նա սիրտ առեց,  
գաղանի դուրս սահեց վրանից եւ հեղիկ թռաւ-

դէպի ծաղկութ ձորը: Աղբարակին տեսաւ Հասօյին  
եւ սիրակարօտ ընկաւ նրա գիրկը:

Ճովերն մարմանդ երգ ասին,  
Ծաղկունք անոյշ բոյր տուին:

Գիշեր էր. թանձր խաւար: Գաթման եւ  
Հասօն իրար գրկած թռան սար ու ձոր, դէպի  
հեռու աստղեր...:

Ծէգը բացուեց: Կոիւն վերսկսեց: Ահադ  
բէկի բանակը յետ նահանցեց դէպի Մեծ գիւղ:  
Ճանապարհին ընկան բաղմաթիւ գեղջուկ-զի-  
նուորներ ֆաթմանի էշանին, բայց չքնաղ-հու-  
րին չկար:

Լսեց Ասիդ բէկը, կրակ առեց եւ նոր կրակ  
բացեց: Նա հրամայեց զօրքին քար ու քանդ անել  
Մեծ գիւղը եւ գեղջուկ ֆաթմանին գտնել:

Գեղջուկ զինուորները խելագարուած ըն-  
կան գիւղերը, չորս կողմ կրակ եւ հրդեհ բա-  
ցին, հազար-հազար օջախներ քար ու քանդ  
արին, բայց ֆաթմանին չգտան:

Նա հարս էր դառել չորան Հասօյին:

Ասում են չորան Հասօն ժողովրդական  
իզիթ էր դառել: Նա անցել էր անտուն, անօթի  
ժողովրդի զլուխ եւ շէնացնում էր աւերակ  
գիւղերն ու քաղաքները, օգնում բոլոր խել-  
ձերին եւ չքաւորներին: Նրանց երկաթէ բա-  
զուկներով էլ անխնայ ոչնչացնում էր գիշատիչ  
առբարներին, անգութ հողատէրերին և նրանց  
հողերը բաժանում աշխատաւոր հողազուրկ  
գեղջուկներին:

Իսկ ժողովուրդը հազարաւոր երգերի  
նիւթ էր դարձրել Հասօյի անունը եւ երգում  
էր ու փառաբանում նրա հոչակաւոր գործերը:

Այս հէքեաթը այսօր սեփականութիւնն է  
կազմում Զահարմահալ գաւառի պարսիկ եւ  
հայ աշխատաւոր գիւղացիութեան եւ շըջում է  
բերնից բերան: Ծագումը պարսկականն է թէ  
հայկական: Այս հարցի շուրջ գիւղացիները  
իրար հետ չեն համաձայնուում: Պարսիկ գեղ-  
ջուկները Հասօն իրենց սարերի իգիթն են հա-  
մարում, իսկ հայ ու անջրաբները՝ իրենց հանդերի  
շորանը: Բայց փաստն այն է, որ այսօր Հասօն  
դարձրել է երկու հարեւան աշխատաւոր ժողո-  
վուրդների սիմբոլը: Նրա անունը մի առանձին  
սրբութեամբ յիշում են թէ հայ եւ թէ պար-  
սիկ գեղջուկները:

Ուշ գիշեր էր: Լուսնակ, պարզկայ, չէքեաթային գիշերը: Գեղջկական պարզուկ օջախից հիւրերը հետզհետէ բաժանուեցին եւ ես չոնդուրի քաջը, դիւրեկան, անոյշ լարերի տպաւութեան ներքոյ մտայ Մորթէոսի գիրկը:

Լուսածէ գին ճանապարհ ընկայ գէպի վերին-քօնարք, ժողովրդական նոր երգեր ձեռք բերելու եւ գեղջուկների կեանքը նկարելու ջերմողով տողորութան:

Վինանա, 27 Մարտ 1924: ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ



## ՀՅՅ ԲՓՃԿԱԿԱԾՆ ՉԵԹԱԳԻՐՔ

ԲՓՃԿԱՎՐԵՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՎԵՆՔԻՆ

Հայ բժշկական ձեռագիրներու հնագոյն՝ վենետիկի Միհմարեան վանքին սեպհական գագիկ-Հեթուման բժշկարանը ծանօթացնելէս յետոյ<sup>1</sup>, կարեւոր կը համարիմ յիշատակել նաեւ Երուսաղէմի Ս. Յակոբեանց Միհարանութեան Մատենագարանին բժշկարանը, որ ժամանակակից է առաջինին:

Անոր գրչութեան բուն թուականը յայտնի չէ. բայց Յիշատակարանը՝ որ Օշինի որդի Հեթումին անունը Կ'արձանագրէ, թոյլ կու տայ մեղ հետեւցնել, թէ 1294—1307ի ժամանակամիջնին<sup>\*</sup> կը վերաբերի այն, ինչպէս են-

թագրած է արդէն Մեսրոպ վարդապետ (այժմ Եպիսկոպոս Էջմիածնի), որ 19 յ 9 Արարատին մէջ (էջ 590), հարեւանց տեղեկութիւն մը հրատարակեց այս ձեռագիր մասին:

Անոր ծաւալը կամ պարունակութիւնը չէ սակայն, որ կը շահագրգուն զիս այժմ, այլ մէջը գտնուած երկու թերթ պատկերները, որոնց գունաւոր նմանահանութիւնը բախտ ունեցած ստանալ, շնորհիւ երուսաղէմի Պատրիարք Դուրեան Ամենա. Եղիշէ Սրբազն Աբքայիսկոպասին, որուն հրապարակաւ կը յայտնեմ իմ երախտապարտ շնորհակալութիւններս:


Մեսրոպ վարդապետ 1909ին կը զրէր նաեւ, թէ այս Զեռագիրը կը պարունակէ Միհմար Հերացիի Հեթմանց Միհմարութիւն աշխատութիւնը, բայց պակասաւոր, զօր յետոյ լրացուցած է նոր զրիչ մը:

Բուն ընդորինակողին յիշատակութիւնը կորսուած է կ'ըսուի, եւ ձեռագրին մէջ կը կարդացուի միայն երկու համառօտ յիշատակութիւն, որուն առաջինն է:

“Տէր Յիսուս վայելել տացէ զբժշկարանն մեծի եւ բարեկացու իշխանին Սեւատաւասին Հեթման՝ որդուոյ Աւշնի բարեպաշտի:”

Իսկ երկրորդը՝ որուն լուսանկարն ալ կը ներկայացնեմ է:

“Յիսուս Քրիստոս որ քժիշկլի եւ հոգոց եւ մարմնոց, | բըթըշկեա զվէլր հոգույ եւ մարմնոյ ծա | ուային քո Հեթման սեւատաւասի որդուոյ | Աւշնի, եւ զեզ վատը յափտեանս. ամեն:”



<sup>1</sup> Յառաջական, 1923 թիւ, Յունուար եւ Փետրուար:

\* Մնացի աւելի հաւանական կ'երեւայ Յիշատակագրին ակնարկած “Հեթում սեւատաւու որդի Աւշին համարի ներկու համբանացոյ եղբայրը “Հեթում” սեւատաւու որդի Օշին, զօր կիլիկոյ Պատմէը կ'ա-

նուանտ “այր զգօն եւ մեծիմաստ եւ գրագէտ յոյժ” (Միհման, էջ 80): Օշին վախճանեցաւ 1175ին թողով Եղիշանութիւնը անվանիկ որդուոյ Հեթման. սա Եղիշեց Լամբանի երեւ Մերաստու մինչեւ 1201, երբ Խաղաղորդին կալմանաւորուեցաւ եւ ապա կրօնաւորեցաւ